

«ԱԼՄԱՍ» ԲԲԸ
2009Թ. ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿ)

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՁԵԿՈՒՅՑ

- 1) Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած կարևոր դեպքերի նկարագիրը և դրանց ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որի հետ առնչվելու է ընկերությունը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում: Կարևոր դեպքերը բոլոր այն դեպքերն են, որոնք էական ազդեցություն են ունեցել ընկերության ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այլ դեպքերը, որոնք ընկերության կարծիքով կարևոր են և (կամ) ողջամիտ ներդրողը կկարևորեր ներդրումային որոշումներ կայացնելիս:

Ընկերության գործունեության հիմնական տեսակը ալմաստային գործիքների արտադրությունն է: Դրանցից են քար կտրող, հղկող, ապակի կտրող գործիքները: Մանրածախ գներով հաշվարկի դեպքում 2009 թ. 1-ին եռամսյակի ընթացքում արտադրվել է 9,994,000 դրամի արտադրանք: Արտադրության հումքը (մետաղ, օլոֆ, պղինձ և այլն) Ընկերությունը ձեռք է բերում Ռուսաստանի Դաշնությունից և Չինաստանից: Հաշվետու եռամսյակում Ռուսաստանի Դաշնությունից հումք ձեռք չի բերվել, իսկ Չինաստանից ձեռք է բերվել 772,000 դրամի ալմաստային փոշի: Արտադրանքի վաճառքի գները 2009 թ. 1-ին եռամսյակի ընթացքում կայուն են եղել: 2009 թ.-ի 1-ին եռամսյակի ընթացքում իրացվել է 17,905,000 դրամի արտադրանք, որից 8,225,000 դրամի արտադրանք արտահանվել է Իրանի Իսլամական Հանրապետություն: Արտադրանքի իրացումը հիմնականում լինում է տեղական շուկայում: Ընկերությունում առկա արտադրանքի մնացորդը 2009 թ. 1-ին եռամսյակի սկզբի և վերջի դրությամբ բերված է աղյուսակում.

Աղյուսակ 1

«Ալմաստ» ԲԲԸ-ում առկա արտադրանքի մնացորդը (դրամ)

	Պահեստում	Խանութում
01.01.2009 թ.	367,763,000	11,215,000
01.04.2009 թ.	378,978,000	0

Աղյուսակ 2

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2008 թ.

Ցուցանիշ	Հազ. դրամ
Իրացված արտադրանքի ինքնարժեք	-15549
Իրացման ծախսեր	-395
Վարչական ծախսեր	-14556
Գործառնական գործունեությունից շահույթ	-10662
Այլ ոչ գործառնական գործունեությունից շահույթ	-43682
2009թ. I եռ. զուտ շահույթ	-54344
Հիմնական միջոցները 01.04.2009թ.	954436
Կանոնադրական կապիտալը	418217
Դեբիտորական պարտք	15503
Կրեդիտորական պարտք	1109758

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	01.01.2009 թ.
Ջուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	-519.768
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	-0.351
Ակտիվների շահութաբերություն (ROA)	-0.127
Ջուտ շահույթի մարժա (NPM)	-3.035
Կապիտալի համարժեքության գործակից	0.348
Ֆինանսական կախվածության գործակից	1.876
Բացարձակ իրացվելության գործակից	0.065
Ընթացիկ իրացվելության գործակից	0.671
Ընդհանուր իրացվելության գործակից	23.169
Գեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	4.806
Գեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	75.943
Պաշարների շրջանառելիության գործակից	-0.092
Պաշարների շրջապտույտի տևողությունն օրերով	-3978.562
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	-0.057
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	-6375.329

Ընկերության գործունեության հետ կապված հիմնական ռիսկը կամ, ավելի ճիշտ կլինի ասել, անորոշությունը, պայմանավորված է ԱՄՆ դոլարի կուրսի հետ: Այս տարվա դոլարի կուրսի փոփոխությամբ պայմանավորված արդեն իսկ թանկացել են ձեռքբերվող հումքի գները: Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից վնասը կազմել է 43,682,000 դրամ:

2) Ընկերության հետագա հնարավոր զարգացման նկարագիրը հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար:

Ներկայիս համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պայմաններում զարգացման նոր ծրագրերի և հեռանկարների վերաբերյալ կանխատեսումներ հնարավոր չէ անել: Սակայն նշենք, որ գեկույցը կազմելու պահի դրությամբ Ռուսաստանի Գաշնությունից պատվերներ չկան, իսկ տեղական պատվերները անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են: Մինևույն ժամանակ Իրանի Իսլամական Հանրապետությունից փետրվար-մարտ ամիսներին եղել են պատվերներ և նշված ամիսներին արտահանվել է համապատասխանաբար 3,335,000 դրամի և 4,890,000 դրամի արտադրանք:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ զեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՉԻՆՔ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Սերգեյ Սկրաչյան	Տնօրեն, տնօրենների խորհրդի անդամ	Ընթացիկ գործունեության (այդ թվում՝ հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառման կազմակերպման) համար
Խաչիկ Զաքարյան	Տնօրենների խորհրդի նախագահ	Տնօրենների խորհրդի աշխատանքների կազմակերպման համար
Համբարձում Մինասյան	Տնօրենների խորհրդի անդամ	չունի
Ռուբեն Ներսիսյան	Տնօրենների խորհրդի անդամ	չունի
Մանվել Սահակյան	Տնօրենների խորհրդի անդամ	չունի
Օլգա Գասպարյան	Տնօրենների խորհրդի անդամ	չունի
Վարազդատ Ներսիսյան	Տնօրենների խորհրդի անդամ	չունի
Դոնարա Մայանյան	գլխավոր հաշվապահ	Հաշվապահական հաշվառում վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար